https://doi.org/10.59821/18294219-2025.2-qab08

Արման Բաբախանյան
Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր,
Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դասախոս, ասպիրանտ

ՔՐԵԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԱԿԱՐԳՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՐՁՐ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԴԵՄ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ[1]

Համառոտագիր

Սույն հոդվածը նվիրված է քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձանց դեմ քրեաիրավական պայքարին:

Օրենսդիրը, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածը նախատեսելով, նպատակ է հետապնդել քրեական պատասխանատվություն նախատեսել գողական աշխարհի վերին օղակի ներկայացուցիչների համար նաև այն դեպքերում, երբ վերջիններիս արարքներում կբացակայեն գողական աշխարհը ղեկավարելու կամ դրան մասնակցելու հանցակազմերը:

Այս առնչությամբ, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածը ձևակերպելիս՝ օրենսդրի կողմից որդեգրած որոշ մոտեցումներ խնդրահարույց են, ինչով էլ պայմանավորված է սույն հետազոտության արդիականությունը: Սույն հոդվածի նպատակն է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածում նախատեսված իրավակարգավորման համակարգային ուսումնասիրության և վերլուծության արդյունքում ներկայացնել առաջարկներ՝ ուղղված քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետությունը բարձրացնելուն:

Հետազոտության արդյունքում հեղինակն առաջարկել է «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ» եզրույթի փոխարեն կիրառել «քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ» եզրույթը: Հեղինակը առաջարկել է նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել, իսկ այն, այնուամենայնիվ, պահպանելու դեպքում դրանում նախատեսել կանխավարկած:

Հեղինակը գտել է նաև, որ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանողի հասկացությունն անհրաժեշտ է խմբագրել՝ ներկայացնելով քննարկվող հասկացության սեփական տարբերակը:

[1] Հոդվածը ներկայացվել է 12.02.2025թ., գրախոսվել է 28.10.2025թ.:

Հիմնաբառեր– քրեական ենթամշակույթ, գողական աշխարհ, քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ, օրենքով գող, գողական աշխարհը ղեկավարել, գողական աշխարհին մասնակցել:

Ներածություն

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի[2] (այսուհետ նաև՝ գործող Օրենսգիրք) 322-րդ հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու, ստանալու կամ պահպանելու համար:

Օրենսդիրը, քննարկվող հանցակազմը նախատեսելով, նպատակ է հետապնդել քրեական պատասխանատվություն նախատեսել գողական աշխարհի վերին օղակի ներկայացուցիչների համար նաև այն դեպքերում, երբ վերջիններիս արարքներում կբացակայեն գողական աշխարհը ղեկավարելու կամ դրան մասնակցելու հանցակազմերը: Այնուամենայնիվ, քննարկվող հոդվածը ձևակերպելիս, օրենսդրի կողմից որդեգրած որոշ մոտեցումներ խնդրահարույց են, այդ թվում նաև՝ վերը նշված նպատակին հասնելու տեսանկյունից: Նման պայմաններում, քննարկվող հանցակազմի ուսումնասիրությունը և դրա կատարելագործմանն ուղղված առաջարկներ ներկայացնելն էական նշանակություն ունեն քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետությունը բարձրացնելու գործում, ինչն էլ հիմնավորում է սույն հետազոտության արդիականությունը:

Սույն հետազոտության նպատակն է գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածում նախատեսված իրավակարգավորման համակարգային ուսումնասիրության և վերլուծության արդյունքում ներկայացնել առաջարկներ՝ ուղղված քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետությունը բարձրացնելուն:

Նշված նպատակներին հասնելու համար խնդիր է դրվել՝

1. քննարկել «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ» եզրույթի ներկայիս ձևակերպումը՝ ներկայացնելով դրա հստակեցմանն ուղղված առաջարկ,
2. քննարկել գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված հասկացության ներկայիս ձևակերպումը՝ ներկայացնելով դրա հստակեցմանն ուղղված առաջարկներ,
3. քննարկել գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված հասկացության ներկայիս ձևակերպումը և այն նախատեսելու անհրաժեշտությունը՝ այդ առնչությամբ ներկայացնելով առաջարկներ:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021:

Աշխատանքում, պայմանավորված հետազոտման նպատակով և խնդիրներով, կիրառվել են ընդհանուր և հատուկ մեթոդներ, մասնավորապես՝ անալիզ, սինթեզ, համակարգակառուցվածքային, իրավահամեմատական և այլ մեթոդներ:

«Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ (օրենքով գող կամ քրեական հեղինակություն)» եզրույթը

Պետք է նշել, որ օրենսդրի օգտագործած «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ» եզրույթում բարձրագույն բառի կիրառումը տեղին չէ, քանի որ բարձրագույն նշանակում է ամենաբարձր, գերագույն դիրք գրավող[3]:

Մինչդեռ, «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ» եզրույթի ներքո օրենսդիրը նկատի ունի ոչ միայն գողական աշխարհում ամենաբարձր, գերագույն դիրքը գրավող անձին, այլ նաև գողական աշխարհում այլ կարգավիճակ ունեցող անձանց ևս: Հետևաբար, «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ» եզրույթի փոխարեն առավել տեղին է կիրառել «քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ» եզրույթը:

Բացի այդ, գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասում օրենսդիրն օգտագործում է միայն «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ» ձևակերպումը, 2-րդ մասում՝ «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը պահպանող (օրենքով գող կամ քրեական հեղինակություն)», իսկ 3-րդ մասում՝ «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ (օրենքով գող կամ քրեական հեղինակություն) ստացած» ձևակերպումները:

Ավելորդ կրկնաբանությունից խուսափելու նպատակով՝ կարծում ենք, առավել նպատակահարմար է գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասում՝ «քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ» ձևակերպումից հետո, բացահայտել, թե ովքեր են համարվում այդպիսիք, իսկ այլ իրավանորմերում օգտագործել միայն «քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ» ձևակերպումը:

Այս առնչությամբ, ինչպես արդեն նշվել է, «քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ» հասկացության մեջ օրենսդիրը պետք է հրաժարվի «քրեական հեղինակություն» տերմինը կիրառելուց և այդ հասկացությունում ամրագրի այն սուբյեկտների ոչ սպառիչ ցանկը, որոնք, ըստ օրենսդրի, հանդիսանում են քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ՝ ցանկում ներառելով առնվազն «օրենքով գողի», «պոլոժենեցի» («положенец») և «զոն նայողի» կարգավիճակները[4]: Ինչ վերաբերում է այդ

[3] Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, 1969, էջ 299, http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A2%D5%A1%D6%80%D5%B1%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D5%B6 (մուտք 06.11.2024թ.):

[4] Տե՛ս Ա. Բաբախանյան ««Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը» հանցակազմի որոշ հիմնահարցեր», ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, ISSN 2579-258X, 1(2)

կարգավիճակների բովանդակությանը, դրանք տալու և ստանալու էությանը, ապա դրանք բացահայտված են մի շարք աղբյուրներում[5], հետևաբար դրանց կրկին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է:

Քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ տալը

Անդրադառնալով քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ տալուն՝ հարկ է քննարկել այդ արարքը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորում, նախատեսելու անհրաժեշտությունը:

Նման անհրաժեշտության բացակայության մասին տեսակետ է արտահայտվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քննարկվող կարգավիճակ տվողը՝ անկախ նրանից տրվում է «օրենքով գողի», «պոլոժենեցի», թե «նայողի» կարգավիճակ, հանդիսանում է արդեն իսկ «օրենքով գողի» կարգավիճակ ունեցող սուբյեկտ, իսկ «նայողի» դեպքում նաև «պոլոժենեցի» կարգավիճակ ունեցող անձ: Այսինքն, առկա քրեաիրավական կարգավորումը նույն հոդվածում նախատեսում է սուբյեկտին քրեական պատասխանատվության ենթարկելու երկու տարբեր պայմաններ՝ քննարկվող կարգավիճակ զբաղեցնելու (պահպանելու) և արդեն իսկ կարգավիճակը զբաղեցնողի կողմից մեկ այլ սուբյեկտին քննարկվող կարգավիճակ տալու: Ընդ որում, առաջին պայմանը լիարժեք կարող է ինքնուրույն գործել: Եթե անձը տալիս է քննարկվող կարգավիճակը, ապա ինքն արդեն իսկ կրում է (պահպանում է) նման կարգավիճակ[6]: Այլ կերպ, ըստ հեղինակի՝ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ տալը նույն կարգավիճակը պահպանելու մասնավոր դրսևորումն է:

Համաձայն լինելով հեղինակի հետևության հետ, որ բացակայում է քննարկվող կարգավիճակ տալը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորում, նախատեսելու անհրաժեշտությունը, անհրաժեշտ է որոշակի ճշգրտումներ կատարել նման հետևության հիմքում դրվող պատճառաբանության կապակցությամբ:

2020, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2021, էջ 80, http://publishing.ysu.am/files/Iravagitutyan aspirantner-2020.pdf (մուտք 06.11.2024թ.):

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ashlarba v. Georgia գործով 2014 թվականի հուլիսի 15-ի վճռի 23-րդ կետը, գանգատ թիվ 45554/08, https://hudoc.echr.coe.int/?i=001-145572 (մուտք 06.11.2024թ.), Կ. Ա. Բիշարյան «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտագործնական մեկնաբանություններ)», ISBN 978-9939-9240-0-7, Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, էջեր 8-10, 13-14, 24-25, 27, https://aoj.am/storage/library/academy-publications/cA1p3cXVvJQorU9WKQ9tqumypZNDI64fq9C5IzEu.pdf (մուտք 06.11.2024թ.), Д. А. Григорьев, В. И. Морозов "Как определить лицо, занимающее высшее положение в преступной иерархии?", Юридическая наука и правоохранительная практика, 2014, №4 (30), էջ 53, https://cyberleninka.ru/article/n/kak-opredelit-litso-zanimayuschee-vysshee-polozhenie-v-prestupnoy-ierarhii (մուտք 06.11.2024թ.), С. Д. Белоцерковский "Новый федеральный закон об усилении борьбы с преступными сообществами: комментарий и проблемы применения", Уголовное право, ISSN: 2071-5870, 2010, № 2, էջ 13, https://www.elibrary.ru/item.asp?id=14865099 (մուտք 06.11.2024թ.):

[6] Տե՛ս Մ. Ս. Արշակյան «Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու քրեաիրավական բնութագիրը», իրավ. բակալավրի որակավորման աստիճանի հայցման համար ավարտական աշխատանք, Երևան, 2024, էջեր 47-48:

Այսպես, կարծում ենք, որ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ տալը նաև գողական աշխարհը ղեկավարելու դրսևորումներից մեկն է և նման կարգավիճակ տալն առանձին նախատեսված չլինելու պարագայում անձի արարքներն կորակվեն որպես գողական աշխարհը ղեկավարել: Օրինակ՝ հանցավորի կողմից գողական աշխարհի անդամ չհանդիսացող անձին քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ տալու դեպքում, ստացվում է, որ հանցավորը գողական աշխարհ նոր անձ է ներգրավվում, այդ կերպ՝ կատարելով գողական աշխարհի կազմակերպակառավարչական գործառույթներ: Նույն գործառույթների իրականացում կդիտարկվի նաև այն դեպքը, երբ հանցավորը գողական աշխարհի անդամ հանդիսացող անձին տա քննարկվող կարգավիճակը:

Ստացվում է, որ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ տալը, մեծամասամբ, գողական աշխարհը ղեկավարելու դրսևորումներից մեկն է և գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածում այդպիսի կարգավիճակ տալն առանձին նախատեսված չլինելու դեպքում, այդ արարքը, այնպես չէ, որ չի առաջացնի քրեական պատասխանատվություն:

Իսկ, երբ հանցավորի կողմից քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ տալը չհանդիսանա գողական աշխարհի ղեկավարում, միայն այդ դեպքերում վերը նշված հեղինակի տեսակետն առ այն, որ քննարկվող կարգավիճակ տալը նույն կարգավիճակը պահպանելու մասնավոր դրսևորումն է, ընդունելի կլինի (քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանելը մեր կողմից վերլուծվել է հաջորդիվ): Նման դեպքեր, թեև, կարող են առավել հազվադեպ տեղի ունենալ, քան գողական աշխարհի ղեկավարում հանդիսացող քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ տալու դեպքերը, այնուամենայնիվ, չպետք է բացառել դրանց տեղի ունենալու հնարավորությունն ընդհանրապես:

Այս առնչությամբ հարկ է արձանագրել, որ առկա է «օրենքով գողի» կարգավիճակ գնելու հնարավորություն թեկնածուի կողմից, ով չի համապատասխանում պահանջներին: Այդպես, քրեական աշխարհում առաջացան, այսպես կոչված, «ապելսինները»[7]:

«Ապելսիններն» անձինք են, ովքեր ձեռք են բերել բարձրագույն քրեական կարգավիճակը, այսպես կոչված, «օբշակում» կատարված խոշոր դրամական պարգևատրման դիմաց: Այդպիսի անձինք չունեն իրական ազդեցություն քրեական համայնքի նկատմամբ, նրանց կարգավիճակը համարվում է ձևական, հակահիրավական արարքների կազմակերպման հետ կապված ոչ մի հարց նրանք չեն որոշում[8]:

---

[7] Տե՛ս Т. В. Стукалова "Занятие высшего положения в преступной иерархии: проблемы квалификации и доказывания", DOI: https://doi.org/10.23670/IRJ.2021.103.1.105, Международный научно-исследовательский журнал, №1-4 (103), 2021, էջ 94, https://cyberleninka.ru/article/n/zanyatie-vysshego-polozheniya-v-prestupnoy-ierarhii-problemy-kvalifikatsii-i-dokazyvaniya (մուտք 06.11.2024թ.):

[8] Տե՛ս А. С. Морозов "Критерии определения лидеров и активных участников группировок отрицательной направленности при постановке на профилактический учет", Уголовно-исполнительная

Կարծում ենք, քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ տալը՝ որպես նույն կարգավիճակը պահպանելու, այլ ոչ թե գողական աշխարհը ղեկավարելու դրսևորման օրինակ է այն դեպքը, երբ, այսպես կոչված, «ապելսինները» քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ են տալիս այլ անձանց: Նման դեպքերում, այսպես կոչված, «ապելսինների» արարքը չի կարող դիտարկվել որպես գողական աշխարհի ղեկավարում, այնուամենայնիվ, նրանք կատարում են իրենց կարգավիճակից բխող արարք, որը պետք է արժանանա քրեաիրավական գնահատականի:

Ստացվում է, որ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ տալու դեպքերը հանդիսանում են կա՛մ գողական աշխարհը ղեկավարելու, կա՛մ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանելու դրսևորումներ: Հետևաբար, համակարծիք ենք այն տեսակետի հետ, որ բացակայում է քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ տալը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորում, նախատեսելու անհրաժեշտությունը:

Քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստանալը

Գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Սույն հոդվածի իմաստով՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ (օրենքով գող կամ քրեական հեղինակություն) ստացած է համարվում այն անձը, որն, այդ կարգավիճակը ձեռք բերելով, իրական հնարավորություն է ունեցել կատարելու սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները»:

Նման կարգավիճակ ստանալու համար քրեական պատասխանատվության է ենթակա այն անձը, ով «օրենքով գողերի» հավաքի ժամանակ ստացել է «օրենքով գողի» կարգավիճակ, կամ օրինակ՝ «օրենքով գողի» կողմից քրեակատարողական հիմնարկում կամ դրանից դուրս, այսպես կոչված, «նայողի» կարգավիճակ ստացած անձը: Նման կարգավիճակ ստանալն ավարտված է համարվում «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցողի գործառույթներն» իրականացնելու հնարավորություն ստանալու պահից: Այսինքն՝ ավարտված հանցակազմի առկայության համար չի պահանջվում, որպեսզի անձը, ում տրվում է նման կարգավիճակ, փաստացի կատարի «քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող» հասկացության մեջ մտնող որևէ գործողություն[9]:

Նախ, հարկ է անդրադառնալ քննարկվող կարգավիճակ ստանալը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորում, նախատեսելու նպատակահարմարությանը:

Տեսակետ է արտահայտվել նման կարգավիճակ ստանալու համար առանձին քրեական պատասխանատվություն նախատեսելու աննպատակահարմարության մասին այն պատճառաբանությամբ, որ եթե դիտարկվի այն մոտեցումը, որ

система сегодня: взаимодействие науки и практики: материалы XXI Всероссийской научно-практической конференции, Новокузнецк, 2021, էջ 179, https://elibrary.ru/item.asp?id=47303843 (մուտք 06.11.2024թ.):

[9] Տե՛ս Կ. Ա. Բիշարյան նշված աշխ., էջեր 9-10:

«օրենքով գողի» կարգավիճակ ստանում է «պոլոժենեցը», իսկ «պոլոժենեցի» կարգավիճակ՝ «նայողը», ապա նման պարագայում ստացվում է, որ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող սուբյեկտն ավելի բարձր կարգավիճակ է ստանում, սակայն նա, փաստացի, արդեն իսկ հանդիսանում է այդպիսի կարգավիճակի կրող և, ըստ էության, նույն սուբյեկտը քրեական պատասխանատվության է ենթարկվում միաժամանակ և՛ բարձրագույն կարգավիճակ պահպանելու, և՛ բարձրագույն կարգավիճակ ստանալու համար: Իսկ այն պարագայում, երբ այդպիսի կարգավիճակ (որպես կանոն, «նայողի» կարգավիճակ) ստանում է հանցավոր միջավայրում որոշակի կարգավիճակ չունեցող սուբյեկտը, ապա վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու համար առնվազն պետք է հանցանքը բացահայտվի կատարման, այսինքն, քննարկվող կարգավիճակ ստանալու պահին (ինչը, սակայն արտասահմանյան գրականության և դատական պրակտիկայի ուսումնասիրությունից ելնելով՝ դեպքերի մեծամասնությունում իրավապահներին չի հաջողվում)[10]:

Նախ, անձին մինչև քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստանալը նույն աստիճանակարգությունում մեկ այլ բարձր կարգավիճակ պահպանելու համար քրեական պատասխանատվության ենթարկելու համար պետք է ապացուցել, որ վերջինս մինչև երկրորդ կարգավիճակ ստանալը կատարել է գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողություններից որևէ մեկը, ինչը ոչ միշտ է հնարավոր ապացուցել: Նման իրավիճակներում, այդպիսի անձին քրեական պատասխանատվության ենթարկելու միակ հիմքը մնում է քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ երկրորդ անգամ ստանալը: Մինչդեռ, քննարկվող կարգավիճակ ստանալը քրեականացված չլինելու դեպքում վերը նշված իրավիճակներում անձինք ենթակա չէին լինի քրեական պատասխանատվության, թեև, ապացուցված կլիներ վերջիններիս կողմից քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստանալը, ինչը, մեր կարծիքով, ընդունելի չէ:

Ինչ վերաբերում է այդպիսի կարգավիճակ ստանալու պահին իրավապահ մարմինների կողմից այդպիսի դեպքերի մեծամասնությունը չբացահայտելուն՝ կարծում ենք, որ իրավապահ մարմիններն օժտված են օպերատիվ-հետախուզական և քրեադատավարական անհրաժեշտ գործիքակազմով, այդ թվում նաև՝ գաղտնի քննչական գործողություններ կատարելու իրավասությամբ՝ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստանալու դեպքերը բացահայտելու համար: Բացի այդ, քննարկվող կարգավիճակ ստանալու դեպքերն իրավապահ մարմինների կողմից չբացահայտելը հիմք չէ նման կարգավիճակ ստանալը՝ որպես օբյեկտիվ կողմի առանձին դրսևորում, չնախատեսելու համար:

Այսպիսով, քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստանալը, ի տարբերություն նույն կարգավիճակը տալու, անհրաժեշտ է որպես

[10] Տե՛ս Մ. Ս. Արշակյան նշված աշխ., էջ 49:

օբյեկտիվ կողմի առանձին դրսևորում նախատեսել գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասում:

Սակայն, կարծում ենք, որ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստանալու առնչությամբ ներկայումս դրսևորած մոտեցումը, մասնավորապես՝ գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 3-րդ մասը, խնդրահարույց է և ավելորդ խոչընդոտ է քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ քրեաիրավական պայքար մղելու գործում:

Այսպես, գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստացած է համարվում այն անձը, որն, այդ կարգավիճակը ձեռք բերելով, իրական հնարավորություն է ունեցել կատարելու նույն հոդվածի 2-րդ մասով՝ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանողի հասկացության մեջ նախատեսված գործողությունները: Հատկանշական է, որ նման պայման նախատեսված չէր 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի[11] (այսուհետ նաև՝ նախկին Օրենսգիրք) 223.1-ին հոդվածում:

Ստացվում է, որ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստանալու հանգամանքն ապացուցելը դեռևս բավարար չէ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Անհրաժեշտ է նաև ապացուցել, որ վերջինս, այդ կարգավիճակը ձեռք բերելով, իրական հնարավորություն է ունեցել կատարելու քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանողի հասկացության մեջ նախատեսված գործողությունները:

Իրավակիրառ պրակտիկայում նման հանգամանք ապացուցելը, կարծում ենք, դժվարություն է ներկայացնելու հատկապես այն դեպքերում, երբ հանցանքը կբացահայտվի քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստանալուց անմիջապես հետո՝ հաշվի առնելով նաև մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ չփարատված ողջամիտ կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կանոնի առկայությունը: Իսկ պաշտպանության կողմը նման դեպքերում հակված է լինելու վիճարկել անձի կողմից վերը նշված գործողությունները կատարելու իրական հնարավորություն ունենալը:

Նման պայմաններում, կարծում ենք, գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 3-րդ մասն ավելորդ խոչընդոտ է քննարկվող կարգավիճակ ստացողների դեմ արդյունավետ քրեաիրավական պայքար մղելու գործում, հետևաբար այն անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել:

Այնուամենայնիվ, գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 3-րդ մասը պահպանելու դեպքում, անհրաժեշտ է այդ իրավանորում նախատեսել կանխավարկած:

Քրեական դատավարությունում կանխավարկածը օրենքով կամ նախադեպային իրավունքով հաստատված այն կանոնն է, որի համաձայն՝ որոշակի

[11] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407:

հանգամանք համարվում է հաստատված, քանի դեռ օրենքով սահմանված կարգով չի ապացուցվել հակառակը[12]:

Իրավական կանխավարկածների դեպքում իրավական նշանակություն ունեցող փաստը հաստատված ու ապացուցված է համարվում ոչ թե ապացույցների հիման վրա, այլ բխեցվում է արդեն իսկ ապացուցված մեկ կամ մի քանի փաստերից: Այլ կերպ ասած՝ իրավական կանխավարկածի դեպքում փաստի ապացուցման միջոցը ոչ թե ապացույցն է, այլ արդեն ապացուցված մեկ այլ փաստը կամ փաստերը, որոնք իրենց գոյությամբ ենթադրում են դրանց հետ օրգանապես կապված կամ դրանցից ողջամտորեն բխող այլ փաստի գոյությունը[13]:

Որպես կանոն, քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստացողներն ունենում են իրական հնարավորություն կատարելու նույն կարգավիճակ պահպանողի հասկացության մեջ նախատեսված գործողությունները: Նման պայմաններում և հաշվի առնելով նաև վերը նշված հնարավորություն ունենալն ապացուցելու դժվարությունը՝ կարծում ենք, որ արդեն ապացուցված փաստից՝ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստանալուց կարելի է բխեցնել մեկ այլ փաստ՝ նույն կարգավիճակ պահպանողի հասկացության մեջ նախատեսված գործողությունները կատարելու իրական հնարավորություն ունենալը:

Այսինքն, վարույթն իրականացնող մարմինը պետք է ապացուցի քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստանալու փաստը, որից կբխեցվի և հաստատված կհամարվի նույն կարգավիճակ պահպանողի հասկացության մեջ նախատեսված գործողությունները կատարելու իրական հնարավորություն ունենալը՝ այդ կերպ վարույթն իրականացնող մարմնին ազատելով այդ փաստը ապացուցելու պարտականությունից: Նման պայմաններում, իրական հնարավորություն ունենալը վիճարկելու դեպքում հակառակն ապացուցելու պարտականությունը կկրի պաշտպանության կողմը:

Այսպիսով, գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 3-րդ մասը պահպանելու դեպքում անհրաժեշտ է այն լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Սույն մասը հիմնվում է սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները կատարելու իրական հնարավորություն ունենալու կանխավարկածի վրա»:

---

[12] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշման 30-րդ կետը, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905400848 (մուտք 06.11.2024թ.):

[13] Տե՛ս Գ. Բաղդասարյան «Անմեղության քրեադատավարական կանխավարկածն ու մեղավորության քրեաիրավական կանխավարկածը», DOI: https://doi.org/10.46991/BYSU:C/2024.15.1.124, Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, ISSN: 2738-2605, Vol. 15, No. 1(40), 2024, էջ 126, https://journals.ysu.am/index.php/bulletin-ysu-jurisprudence/article/view/vol15_no1_2024_pp124-136 (մուտք 06.11.2024թ.):

Քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանելը

Գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն գլխի իմաստով՝ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակը պահպանող (օրենքով գող կամ քրեական հեղինակություն) է համարվում այն անձը, որը, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն, համարվում է հեղինակություն և քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացման համար տալիս է հրահանգներ, կազմակերպում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հավաքներ կամ մասնակցում է դրանց կամ կազմակերպում կամ իրականացնում է դրամական միջոցների հավաքագրում (այդ թվում՝ մոլախաղերի միջոցով) կամ տնօրինում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման միջոցով ստացված անօրինական օգուտը կամ կատարում է քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների իրականացմանն ուղղված այլ գործողություններ»:

Ինչպես արդեն նշվել է, «քրեական ենթամշակույթ կրող խմբավորման» փոխարեն անհրաժեշտ է կիրառել «գողական աշխարհ» եզրույթը[14]:

Քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանելու օբյեկտիվ կողմի առնչությամբ կարծիք է արտահայտվել այն մասին, որ քննարկվող հանցագործության օբյեկտիվ կողմի տվյալ դրսևորման դեպքում անձին մեղսագրվող հանրորեն վտանգավոր վարքագիծը (արարքը) նման կարգավիճակ կրելն է, տվյալ հասկացության շրջանակներում նկարագրված գործողությունների կատարման հնարավորություն ունենալը՝ այդպիսի կարգավիճակ ստանալուց հետո քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամների կողմից նման կարգավիճակով ընդունված, իսկ հանրության առանձին շրջանակներում՝ նման կարգավիճակով հայտնի լինելու պայմաններում[15]:

Մեկ այլ կարծիքի համաձայն՝ անձը չի կարող համարվել նման կարգավիճակ պահպանող, եթե միայն համարվում է հեղինակություն: Բացի այդպիսին համարվելուց՝ նա պետք է փաստացի իրականացնի նշված հասկացության ձևակերպման մեջ տեղ գտած երկընտրելի գործողություններից առնվազն մեկը, և ոչ թե հանդիսանա այդ գործողությունների իրականացման փաստացի հնարավորության կրող: Այլ խոսքով, միայն հեղինակություն համարվելը, չի կարող ձևավորել քննարկվող հոդվածով նախատեսված ավարտված հանցագործություն: Անհրաժեշտ է, որ այդպիսի հեղինակությունը կատարի տվյալ հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքներից առնվազն մեկը: Քննարկվող հասկացության ձևակերպման մեջ օգտագործվում է «և» շաղկապը, որը միացնում է անձի

[14] Տե՛ս Ա.Բաբախանյան «Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) հասկացության և գողական աշխարհ ստեղծելը քրեականացնելու որոշ հիմնահարցեր», DOI: https://doi.org/10.46991/SL/2024.99.153, Պետություն և իրավունք, թիվ 2 (99), 2024, Երևան, էջեր 160-161:

[15] Տե՛ս Կ. Ա. Բիշարյան նշված աշխ., էջեր 14-15:

հեղինակություն համարվելու և նրա կողմից կոնկրետ արարքներ կատարելու հանգամանքները[16]:

Մենք ևս գտնում ենք, որ հեղինակություն համարվելը և քննարկվող հասկացության շրջանակներում նկարագրված գործողությունների կատարման հնարավորություն ունենալը, չեն կարող ձևավորել քննարկվող հոդվածով նախատեսված ավարտված հանցագործություն:

Հարկ է անդրադառնալ նաև գողական աշխարհը ղեկավարելու կամ դրան մասնակցելու հանցակազմերի հետ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանելու հանցակազմի հարաբերակցության հարցին:

Այս առնչությամբ տեսության մեջ կարծիք է հայտնվել այն մասին, որ քննարկվող հոդվածի 2-րդ մասով նախատեսված կոնկրետ գործողությունների կատարումը ձևավորում է ինքնուրույն հանցակազմեր: Ուստի, քրեաիրավական նորմերի մրցակցության կանոններով, քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձի կողմից այդպիսի գործողությունների կատարումը որակվում է հատուկ հանցակազմերով (քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձի կողմից գողական աշխարհը ղեկավարելը կամ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձի կողմից գողական աշխարհին մասնակցելը)[17]:

Այս մոտեցումը քննադատության է ենթարկվել այն պատճառաբանությամբ, որ եթե քննարկվող կարգավիճակ պահպանելը տևող հանցագործություն է, և այդ հանցանքի ու գողական աշխարհը ղեկավարելու, դրան մասնակցելու ժամանակային սահմանները չեն համապատասխանում միմյանց, այսինքն՝ այդ տևող հանցագործության ընթացքում գողական աշխարհը ղեկավարելը, դրան մասնակցելը կատարվում և ավարտվում են, մինչդեռ անձը շարունակում է պահպանել քննարկվող կարգավիճակը, ապա կատարվածը պետք է որակվի հանցանքների համակցությամբ: Այլ խոսքով՝ եթե գողական աշխարհը ղեկավարելը, դրան մասնակցելն իրենց շրջագծից դուրս են թողնում քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանելը, և իրավական տեսանկյունից ինչպես իրավաբանորեն, այնպես էլ փաստորեն համարվում ավարտված, մինչդեռ, քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանելով՝ հանցավորը շարունակում է քրեաիրավական պաշտպանության օբյեկտը պահել հանցավոր իրադրության մեջ, ապա քննարկվող նորմերի միջև չի կարող գոյություն ունենալ այնպիսի հարաբերություն, որը բնորոշ է ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությանը:

Որպես խնդրի լուծման տարբերակ առաջարկվել է քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանելու հանցակազմում նախատեսել

[16] Տե՛ս Ս. Վ. Առաքելյան, Պ. Վ. Մկրտչյան «Հանցագործությունների որակման հիմնախնդիրները», մենագրություն, ISBN 978-9939-9240-4-5, Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, էջեր 226-227, https://aoj.am/storage/library/academy-publications/tV5CzlND1JZ2pieKvMtuWhsRHU28fXUti2CAZiUN.pdf (մուտք 06.11.2024թ.):

[17] Տե՛ս Կ. Ա. Բիշարյան նշված աշխ., էջեր 16-17:

հանցակազմի նեգատիվ հատկանիշ. եթե բացակայում են գողական աշխարհը ղեկավարելու և դրան մասնակցելու հանցանքների հատկանիշները: Միևնույն ժամանակ, առաջարկվել է քննարկվող կարգավիճակը պահպանելու համար նախատեսել առավել մեղմ պատիժ, քան տվյալ հանցակազմի բացասական հատկանիշում նշված հանցանքների համար[18]:

Մենք ևս համակարծիք ենք վերը նշված երկրորդ տեսակետի հետ և անհրաժեշտ ենք համարում գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածում նախատեսել հանցակազմի բացասական (նեգատիվ) հատկանիշ և անձի արարքը որակել այդ հոդվածով, երբ անձի արարքում կբացակայեն ոչ միայն գործող Օրենսգրքի 323-324-րդ հոդվածներով, այլ նաև 318-319-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների հատկանիշները, քանի որ որոշ դեպքերում քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանելուն ուղղված արարքները կարող են համընկնել նաև հանցավոր կազմակերպություն ստեղծելուն, ղեկավարելուն կամ դրան մասնակցելուն ուղղված արարքների հետ:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան հավասար է գործող Օրենսգրքի 319-րդ և 324-րդ հոդվածների 2-րդ մասերի սանկցիաներին, համակարծիք ենք այն տեսակետի հետ, որ գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված սանկցիան անհրաժեշտ է նվազեցնել, որպիսի պայմաններում առաջարկում ենք որպես պատիժ նախատեսել ազատազրկում՝ վեցից տասը տարի ժամկետով:

Հարկ է նշել, որ հանցակազմի վերը նշված բացասական (նեգատիվ) հատկանիշը պետք է վերաբերի ոչ միայն քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանելուն, այլ նաև գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված նույն կարգավիճակը ստանալուն: Նման պայմաններում, եթե անձը միայն քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ է ստացել, ապա նրա արարքը պետք է որակել գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասով: Իսկ եթե անձը, նման կարգավիճակ ստանալուց բացի, օրինակ կատարել է նաև գողական աշխարհը ղեկավարելուն ուղղված արարքներ, ապա նրա արարքը ենթակա է որակման միայն գործող Օրենսգրքի 323-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձի կողմից գողական աշխարհը ղեկավարել):

Անհրաժեշտ է նաև գործող Օրենսգրքի 320-321-րդ հոդվածներում (պատժվում են ավելի մեղմ, քան գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասը) նախատեսված հանցակազմի բացասական (նեգատիվ) հատկանիշներում կատարել լրացումներ՝ սահմանելով նաև գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածով նախատեսված հանցանքի հատկանիշների բացակայությունը:

Հաջորդիվ, հարկ է ներկայացնել գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հասկացության՝ մեր կողմից առաջարկվող տարբերակը:

Նախ, գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է, որ «Հասարակական անվտանգության դեմ ուղղված ընդհանուր բնույթի հանցագոր-

[18] Տե՛ս Ս. Վ. Առաքելյան, Պ. Վ. Մկրտչյան նշված աշխ., էջեր 225-228:

ծությունները» գլխի իմաստով՝ ով է քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանողը, մինչդեռ բացի քննարկվող հոդվածից, տվյալ գլխի որևէ այլ հոդվածում չի օգտագործվում քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանող ձևակերպումը: Տվյալ գլխի այլ հոդվածներում օրենսդիրը, որպես ծանրանցող հանգամանք նախատեսելիս, օգտագործում է նման կարգավիճակ ունեցող անձի կողմից արարք կատարել ձևակերպումը: Հետևաբար, պարզաբանման կարիք ունի քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանող և նույն կարգավիճակ ունեցող անձ ձևակերպումների հարաբերակցության հարցը:

Կարծում ենք, որ օրենսդիրն իրավացիորեն չի նույնացրել որպես ծանրացնող հանգամանք նախատեսված քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձի կողմից արարք կատարել նույն կարգավիճակը պահպանելու հետ:

Այսպես, եթե անձին գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի տեսանկյունից քննարկվող կարգավիճակը պահպանող դիտարկելու համար անհրաժեշտ է, որպեսզի վերջինս, նման կարգավիճակ ունենալուց բացի, գողական աշխարհի շրջանակներում կատարի իր կարգավիճակից բխող որևէ արարք[19], ապա այլ հանցակազմերում որպես ծանրացնող հանգամանք նախատեսելով նույն կարգավիճակ ունեցող անձի կողմից արարք կատարելն՝ օրենսդիրը տվյալ ծանրացնող հանգամանքի առկայությունը չի պայմանավորում գողական աշխարհի շրջանակներում իր կարգավիճակից բխող որևէ արարք կատարելով:

Ստացվում է, որ օրինակ՝ եթե օրենքով գողը ստեղծի օրենքով չնախատեսված զինված միավորում, որը որևէ առնչություն չունենա գողական աշխարհի հետ կամ հնարավոր չլինի ապացուցել նման առնչությունը, օրենքով գողը ենթակա կլինի քրեական պատասխանատվության գործող Օրենսգրքի 320-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձի կողմից օրենքով չնախատեսված զինված միավորում ստեղծելու համար, ինչը ընդունելի է՝ հաշվի առնելով քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձանց, այդ թվում նաև՝ օրենքով գողերի ազդեցությունը ոչ միայն գողական աշխարհի անդամների, այլ նաև այլ հանցագործների նկատմամբ[20]:

Իսկ եթե քննարկվող ծանրացնող հանգամանքը նույնացվեր գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածով նախատեսված քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանողի հասկացության հետ՝ ապա վերը նշված օրինակում հնարավոր չէր լինի հանցանք կատարած անձին վերագրել գործող Օրենսգրքի 320-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, ինչն ընդունելի չենք համարում: Նման մոտեցում դրսևորված էր նախկին Օրենսգրքում, որում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված էր քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի կողմից արարք կատարելը, իսկ

[19] Տե՛ս Ս. Վ. Առաքելյան, Պ. Վ. Մկրտչյան նշված աշխ., էջեր 226-227:

[20] Տե՛ս ՄԻԵԴ-ի՝ Ashlarba v. Georgia գործով նշված վճռի 23-րդ կետը:

նախկին Օրենսգրքի 223.1-ին հոդվածի (քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը) 2-րդ մասում տրված էր քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցողի հասկացությունը: Տվյալ հասկացությունից բխում էր, որ նման կարգավիճակ ունեցող դիտարկելու համար, բացի օրենքով գող կամ քրեական հեղինակություն տիտղոսից, անհրաժեշտ էր նաև գողական աշխարհի շրջանակներում իր կարգավիճակից բխող որևէ արարք կատարելը[21]:

Այսպիսով, գտնում ենք, որ գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասում պետք է հրաժարվել «Սույն գլխի իմաստով» ձևակերպումից, քանի որ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանող ձևակերպումը կիրառվում է միայն տվյալ հոդվածում, իսկ այլ հոդվածներով նախատեսված քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձ ձևակերպումը կիրառելիս՝ չպետք է հիմնվել գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասում տրված հասկացության վրա:

Անդրադառնալով տվյալ հասկացության պարտադիր պայմաններից գողական աշխարհի սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն հեղինակություն համարվելուն՝ կարծում ենք, որ դա նախատեսելու անհրաժեշտությունը ևս բացակայում է:

Նման հետևությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակների ոչ սպառիչ ցանկը նախատեսելը, որում ներառվում են «օրենքով գողի», «պոլոժենեցի» («положенец»), «զոն նայողի» և գողական աշխարհում դրանց հավասարարժեք այլ կարգավիճակները, արդեն իսկ բավարար է հասկանալու համար, թե ո՞վ է նման կարգավիճակ պահպանողը և բացակայում է նման կարգավիճակ պահպանողի հասկացության մեջ վերջինիս հեղինակություն համարվելու վերաբերյալ պայման նախատեսելու անհրաժեշտությունը:

Բացի այդ, քննարկվող կարգավիճակը պահպանողի հասկացության մեջ գողական աշխարհի սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն հեղինակություն համարվելը՝ որպես պարտադիր պայման, պահպանելու դեպքում խնդրահարույց կլինի նման կարգավիճակ պահպանելու համար, այսպես կոչված, «ապելսիններին» քրեական պատասխանատվության ենթարկելը:

Հարկ է նաև նշել, որ հեղինակություն համարվելը տվյալ հասկացության մեջ չնախատեսելու դեպքում վերանում է նաև քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանելու ավարտի պահի առնչությամբ տեսության մեջ առկա վեճը[22]:

Հետևաբար, գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասում պետք է հրաժարվել գողական աշխարհի սահմանած և ճանաչած վարքագծի կանոնների համաձայն հեղինակություն համարվելու պարտադիր պայմանից:

---

[21] Տե՛ս Ս. Վ. Առաքելյան, Պ. Վ. Մկրտչյան նշված աշխ., էջեր 226-227:

[22] Տե՛ս Կ. Ա. Բիշարյան նշված աշխ., էջ 15, Ս. Վ. Առաքելյան, Պ. Վ. Մկրտչյան նշված աշխ., էջեր 153-154:

Անդրադառնալով գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված գործողություններին՝ հարկ է նշել, որ դրանց կապակցությամբ օրենսդրի ներկայիս մոտեցումը խնդրահարույց է:

Օրենսդիրը, անձին քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանող դիտարկելու համար որպես պարտադիր պայման, նախատեսել է այնպիսի գործողություններ, որոնց մի մասը գողական աշխարհը ղեկավարելու կամ դրան մասնակցելու մասնավոր դրսևորումներ են, և որոնք կատարելու դեպքում անձի արարքը պետք է որակել ոչ թե որպես քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանել, այլ գողական աշխարհը ղեկավարել կամ դրան մասնակցել՝ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ունեցող անձի կողմից: Այդպիսիք են գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացման համար հրահանգներ տալը, գողական աշխարհի հետապնդած նպատակների իրականացմանն ուղղված այլ գործողություններ կատարելը: Նման արարքները կատարելու դեպքում, հատկապես գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասում հանցակազմի բացասական հատկանիշ նախատեսելու պարագայում, անձը ենթակա կլինի քրեական պատասխանատվության գողական աշխարհը ղեկավարելու կամ դրան մասնակցելու համար, բայց ոչ քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանելու համար: Հետևաբար, քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանողի հասկացությունում այդ արարքները նախատեսելն առարկայազուրկ է:

Առաջարկում ենք, գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասում որպես քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանող դիտարկել այն անձին, ով կատարում է այդպիսի կարգավիճակից բխող արարքներ՝ տվյալ հասկացության մեջ թվարկելով այդպիսի արարքների ոչ սպառիչ ցանկը:

Արարքների ոչ սպառիչ ցանկում, առաջարկում ենք, պահպանել ներկայումս նախատեսված արարքներից գողական աշխարհի միջոցով ստացված անօրինական օգուտը տնօրինելը, ինչպես նաև գողական աշխարհի հավաքներ կազմակերպելը, դրանց մասնակցելը՝ նախատեսելով դրանք եզակի թվով:

Ներկայումս նախատեսված դրամական միջոցների հավաքագրում (այդ թվում՝ մոլախաղերի միջոցով) կազմակերպելը կամ իրականացնելը, ևս անհրաժեշտ է պահպանել: Այնուամենայնիվ, առավել նպատակահարմար է դրամական միջոցներ ձևակերպումը փոխարինել «գույք» եզրույթով, որպեսզի ցանկացած գույքի հավաքագրում կազմակերպելը կամ իրականացնելն ուղղակիորեն նախատեսված լինի որպես քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանել:

Ի լրումն՝ առաջարկում ենք, գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասում ուղղակիորեն նախատեսել նաև քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ տալը, հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճերը (խնդիրները) լուծելը՝ որպես քննարկվող կարգավիճակ պահպանելու առավել հաճախ հանդիպող դրսևորումներ:

Անդրադառնալով քննարկվող հանցակազմի առնչությամբ արտասահմանյան երկրների փորձին՝ պետք է արձանագրել, որ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի[23] 210.1-ին հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնելու համար:

Իրավաբանական գրականության մեջ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 210.1-ին հոդվածի ձևակերպումն իրավացիորեն քննադատության է ենթարկվել այն պատճառաբանությամբ, որ ակնհայտ փորձ է արվել քրեական օրենսդրությունում վերականգնել անձի վտանգավոր վիճակի տեսությունը: Տվյալ հոդվածի հայեցակարգային թերությունը նրա ակնհայտ անհամապատասխանությունն է Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված հանցագործության հասկացությանը (հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված հանրորեն վտանգավոր արարքը, որը պատժի սպառնալիքով արգելված է Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքով), և դրա ակնհայտ հակասությունը Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 8-րդ հոդվածին (քրեական պատասխանատվության հիմքը հանդիսանում է արարք կատարելը, որը իր մեջ պարունակում է Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները), քանի որ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 210.1-ին հոդվածում պատասխանատվություն է սահմանված ոչ թե արարքի, այլ միայն որոշակի կատեգորիայի անձանց կարգավիճակի, հատկությունների, որակների համար[24]:

Հետևաբար, Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 210.1-ին հոդվածի ձևակերպման տեղայնացումը գործող Օրենսգրքում ընդունելի չի կարող լինել:

Վրաստանի քրեական օրենսգրքի[25] 223[1]-ին հոդվածի 2-րդ մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում անձի՝ «օրենքով գողի» կարգավիճակում լինելու համար, իսկ «Կազմակերպված հանցավորության և շորթման մասին» Վրաստանի օրենքի[26] 3-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ «օրենքով գողն» անձն է, ով ցանկացած ձևով իրականացնում է «գողական համագործակցության» ղեկավարումը կամ (և) կազմակերպումը, կամ «գողական համագործակցության»

---

[23] Տե՛ս Уголовный кодекс Российской Федерации, https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (մուտք 06.11.2024թ.):

[24] Տե՛ս В. Г. Пономарев, А. П. Рожнов "«Преступление–это деяние»: возможна и нужна ли ревизия положений ч.1 ст.14 УК РФ?", DOI: 10.24412/2411-2275-2023-4-125-130, Право и практика, 2023, №4, էջ 128, https://cyberleninka.ru/article/n/prestuplenie-eto-deyanie-vozmozhna-i-nuzhna-li-reviziya-polozheniy-ch-1-st-14-uk-rf (մուտք 06.11.2024թ.):

[25] Տե՛ս Уголовный кодекс Грузии, https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=259 (մուտք 06.11.2024թ.):

[26] Տե՛ս Закон Грузии об организованной преступности и рэкете, https://matsne.gov.ge/ru/document/view/27814?publication=1 (մուտք 06.11.2024թ.):

գործունեության մեթոդների կիրառմամբ իրականացնում է անձանց որոշակի խմբի ղեկավարումը կամ (և) կազմակերպումը:

Կարծում ենք, որ վրացական իրավակարգավորումները գործող Օրենսգրքում որպես քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանել նախատեսելը ևս ընդունելի չէ, քանի որ դրանք, ըստ էության, համապատասխանում են գործող Օրենսգրքով նախատեսված մեկ այլ հանցակազմին՝ գողական աշխարհը ղեկավարելուն:

Հարկ է նշել նաև, որ ներպետական իրավակարգավորումների շրջանակներում առաջարկվել է որպես քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ զբաղեցնող (պահպանող) համարել քրեական ենթամշակույթ կրող խմբավորման այն անդամին, որն իրական հնարավորություն է ունեցել իրականացնելու քրեական ենթամշակույթ կրող խմբավորման ղեկավարմանն ուղղված գործառույթներ կամ տալու հրահանգներ կամ իրականացնելու քրեական ենթամշակույթ կրող խմբավորման հետապնդած նպատակների կենսագործմանն ուղղված և իր կարգավիճակից ելնող ցանկացած այլ գործառույթ[27]:

Գտնում ենք, որ նման ձևակերպումն ընդունելի չէ նույն պատճառաբանություններով, ինչ-որ Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքի 210.1-ին հոդվածի ձևակերպումը: Տվյալ առաջարկը ևս հիմնված է անձի վտանգավոր վիճակի տեսության վրա, քանի որ պատասխանատվություն է սահմանվում ոչ թե արարքի, այլ արարք կատարելու իրական հնարավորություն ունենալու համար: Մինչդեռ, գործող Օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, 16-րդ հոդվածի 1-ին մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի համակարգային վերլուծությունից բխում է, որ քրեական պատասխանատվության հիմքն ինչպես ավարտված, այնպես էլ չավարտված հանցանք կատարելն է, իսկ հանցանք է համարվում գործող Օրենսգրքով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, հանցագործության սուբյեկտի կողմից մեղավորությամբ կատարված արարքը (գործող Օրենսգրքով նախատեսված արարք է համարվում պատժի սպառնալիքով արգելված գործողությունը կամ անգործությունը):

Եզրակացություն

▪ «Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ» եզրույթի փոխարեն առավել տեղին է կիրառել «քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ» եզրույթը: Բացի այդ, ավելորդ կրկնաբանությունից խուսափելու նպատակով՝ առավել նպատակահարմար է գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 1-ին մասում «քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ» ձևակերպումից հետո բացահայտել, թե ովքեր են համարվում այդպիսիք, իսկ այլ իրավանորմերում օգտագործել միայն «քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ» ձևակերպումը:

▪ Գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 3-րդ մասն ավելորդ խոչընդոտ է քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ ստացողների դեմ

[27] Տե՛ս Մ. Ս. Արշակյան նշված աշխ., էջ 46:

արդյունավետ քրեաիրավական պայքար մղելու գործում, հետևաբար այն անհրաժեշտ է ուժը կորցրած ճանաչել: Այնուամենայնիվ, գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 3-րդ մասը պահպանելու դեպքում անհրաժեշտ է դրա առնչությամբ նախատեսել կանխավարկած՝ այն լրացնելով հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ. «Սույն մասը հիմնվում է սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողությունները կատարելու իրական հնարավորություն ունենալու կանխավարկածի վրա:»:

- Գործող Օրենսգրքի 322-րդ հոդվածի 2-րդ մասն անհրաժեշտ է խմբագրել և շարադրել հետևյալ կերպ. «Քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ պահպանող է համարվում այն անձը, որը տնօրինում է գողական աշխարհի միջոցով ստացված անօրինական օգուտը, կազմակերպում է գողական աշխարհի հավաք, մասնակցում դրան, կազմակերպում կամ իրականացնում է գույքի հավաքագրում (այդ թվում՝ մոլախաղերի միջոցով), տալիս է քրեական աստիճանակարգությունում բարձր կարգավիճակ, լուծում է հանրային կամ մասնավոր հարցերին առնչվող վեճեր (խնդիրներ) կամ կատարում է այդպիսի կարգավիճակից բխող այլ արարքներ:»:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ashlarba v. Georgia գործով 2014 թվականի հուլիսի 15-ի վճիռ, գանգատ թիվ 45554/08, https://hudoc.echr.coe.int/?i=001-145572 (մուտք 06.11.2024թ.):

Judgment of the European Court of Human Rights on the Ashlarba v. Georgia case of July 15, 2014, complaint No. 45554/08, https://hudoc.echr.coe.int/?i=001-145572 (access 06.11.2024).

2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, Միասնական կայք 2021.05.17-2021.05.30, Պաշտոնական հրապարակման օրը 27.05.2021:

Criminal Code of the Republic of Armenia, HO-199-N, adopted on May 5, 2021, entered into force on July 1, 2022, Unified website 2021.05.17-2021.05.30, Official publication date 05.27.2021.

3. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407:

Criminal Code of the Republic of Armenia, HO-528-N, adopted on April 18, 2003, entered into force on August 1, 2003, expired on July 1, 2022, HHPT 2003.05.02/25(260) Article 407.

4. ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ Արարատ Ավագյանի և Վահան Սահակյանի գործով 2014 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ ԵԿԴ/0252/01/13 որոշում, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905400848 (մուտք 06.11.2024թ.):

Decision No. EKD/0252/01/13 of October 31, 2014 in the case of Ararat Avagyan and Vahan Sahakyan of the Criminal Chamber of the Court of Cassation of the RA, https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905400848 (access 06.11.2024).

5. Закон Грузии об организованной преступности и рэкете, https://matsne.gov.ge/ru/document/view/27814?publication=1 (մուտք 06.11.2024թ.):

Law of Georgia on organized crime and racketeering, https://matsne.gov.ge/ru/document/view/27814?publication=1 (access 06.11.2024).

6. Уголовный кодекс Грузии, https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=259 (մուտք 06.11.2024թ.):

Criminal Code of Georgia, https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=259 (access 06.11.2024).

7. Уголовный кодекс Российской Федерации, https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (մուտք 06.11.2024թ.):

Criminal Code of the Russian Federation, https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ (access 06.11.2024).

8. Ա.Բաբախանյան «Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման (գողական աշխարհի) հասկացության և գողական աշխարհ ստեղծելը քրեականացնելու որոշ հիմնահարցեր», DOI: https://doi.org/10.46991/SL/2024.99.153, Պետություն և իրավունք, թիվ 2 (99), 2024, Երևան, էջեր 153-162:

A. Babakhanyan "Some key issues of the concept of a group with a criminal subculture (thieves' world) and the criminalisation of creation of the thieves' world", DOI: https://doi.org/10.46991/SL/2024.99.153, State and Law, Vol. 99 No. 2 (2024), Yerevan, pages 153-162:

9. Ա. Բաբախանյան ««Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը» հանցակազմի որոշ հիմնահարցեր», ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, ISSN 2579-258X, 1(2) 2020, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2021, էջեր 61-81, http://publishing.ysu.am/files/Iravagitutyan_aspirantner-2020.pdf (մուտք 06.11.2024թ.):

A. Babakhanyan "Some issues of "granting, obtaining or maintaining the highest status in the criminal hierarchy"", Collection of materials of the session of PhD students and applicants of Faculty of Law of YSU, ISSN 2579-258X, 1(2) 2020, Yerevan, YSU Publishing House, 2021, pages 61-81, http://publishing.ysu.am/files/Iravagitutyan_aspirantner-2020.pdf (access 06.11.2024).

10. Գ. Բաղդասարյան «Անմեղության քրեադատավարական կանխավարկածն ու մեղավորության քրեաիրավական կանխավարկածը», DOI: https://doi.org/10.46991/BYSU:C/2024.15.1.124, Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, ISSN: 2738-2605, Vol. 15, No. 1(40), 2024, էջեր 124-136, https://journals.ysu.am/index.php/bulletin-ysu-jurisprudence/article/view/vol15_no1_2024_pp124-136 (մուտք 06.11.2024թ.):

G. Baghdasaryan "The criminal procedural presumption of innocence and the criminal substantive presumption of fault", DOI: https://doi.org/10.46991/BYSU:C/2024.15.1.124, Bulletin of Yerevan University C: Jurisprudence, ISSN: 2738-2605, Vol. 15, No. 1(40), 2024, pages 124-136, https://journals.ysu.am/index.php/bulletin-ysu-jurisprudence/article/view/vol15_no1_2024_pp124-136 (access 06.11.2024).

11. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., Երևան, 1969, http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A2%D5%A1%D6%80%D5%B1%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D5%B6 (մուտք 06.11.2024թ.):

"Explanatory Dictionary of the Modern Armenian Language", Language Institute named after Hrachya Acharyan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, Yerevan, 1969, http://www.nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=29&dt=HY_HY&query=%D5%A2%D5%A1%D6%80%D5%B1%D6%80%D5%A1%D5%A3%D5%B8%D6%82%D5%B5%D5%B6 (access 06.11.2024).

12. Կ. Ա. Բիշարյան «Քրեական ենթամշակույթին առնչվող արարքների քրեաիրավական բնութագիրը (գիտագործնական մեկնաբանություններ)», ISBN 978-9939-9240-0-7, Երևան, Արդարադատության ակադեմիա, 2020, 46 էջ, https://aoj.am/storage/library/academy-publications/cA1p3cXVvJQorU9WKQ9tqumypZNDI64fq9C5lzEu.pdf (մուտք 06.11.2024թ.):

K. A. Bisharyan Criminal-legal characteristics of acts related to the criminal subculture (scientific-practical comments), ISBN 978-9939-9240-0-7, Yerevan, Academy of Justice, 2020, 46 pages, https://aoj.am/storage/library/academy-publications/cA1p3cXVvJQorU9WKQ9tqumypZNDI64fq9C5lzEu.pdf (access 06.11.2024).

13. Մ. Ս. Արշակյան «Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու կամ պահպանելու քրեաիրավական բնութագիրը», իրավ. բակալավրի որակավորման աստիճանի հայցման համար ավարտական աշխատանք, Երևան, 2024, 63 էջ:

M. S. Arshakyan "Criminal law characteristic of granting, obtaining or maintaining the highest status in the criminal hierarchy", thesis for application for the bachelor's degree of law, Yerevan, 2024, 63 pages.

14. Ս. Վ. Առաքելյան, Պ. Վ. Մկրտչյան «Հանցագործությունների որակման հիմնախնդիրները», մենագրություն, ISBN 978-9939-9240-4-5, Եր., Արդարադատության ակադեմիա, 2020, 400 էջ, https://aoj.am/storage/library/academy-publications/tV5CzlND1JZ2pieKvMtuWhsRHU28fXUti2CAZiUN.pdf (մուտք 06.11.2024թ.):

S. V. Arakelyan, P. V. Mkrtchyan "Problems of the classification of crimes", monograph, ISBN 978-9939-9240-4-5, Yerevan, Academy of Justice, 2020, 400 pages, https://aoj.am/storage/library/academy-publications/tV5CzlND1JZ2pieKvMtuWhsRHU28fXUti2CAZiUN.pdf (access 06.11.2024).

15. А. С. Морозов "Критерии определения лидеров и активных участников группировок отрицательной направленности при постановке на профилактический учет", Уголовно-исполнительная система сегодня: взаимодействие науки и практики: материалы XXI Всероссийской научно-практической конференции, Новокузнецк, 2021, էջեր 179-183, https://elibrary.ru/item.asp?id=47303843 (մուտք 06.11.2024թ.):

A. S. Morozov, "Criteria for determining the leaders and active participants of groups of negative orientation when putting them on the preventive register", Criminal Executive System Today: Interaction of Science and Practice: Proceedings of the XXI All-Russian Scientific and Practical Conference, Novokuznetsk, 2021, 179-183 pages, https://elibrary.ru/item.asp?id=47303843 (access 06.11.2024).

16. В. Г. Пономарев, А. П. Рожнов "«Преступление–это деяние»: возможна и нужна ли ревизия положений ч.1 ст.14 УК РФ?", DOI: 10.24412/2411-2275-2023-4-125-130, Право и практика, 2023, №4, էջեր 125-130, https://cyberleninka.ru/article/n/prestuplenie-eto-deyanie-vozmozhna-i-nuzhna-li-reviziya-polozheniy-ch-1-st-14-uk-rf (մուտք 06.11.2024թ.):

V. G. Ponomarev, A. P. Rozhnov "Crime is an act': is revision of the provisions of part 1 article 14 of the Criminal Code of the Russian Federation possible and

necessary?", DOI: 10.24412/2411-2275-2023-4-125-130, Law and Practice, 2023, No. 4, 125-130 pages, https://cyberleninka.ru/article/n/prestuplenie-eto-deyanie-vozmozhna-i-nuzhna-li-reviziya-polozheniy-ch-1-st-14-uk-rf (access 06.11.2024).

17. Д. А. Григорьев, В. И. Морозов "Как определить лицо, занимающее высшее положение в преступной иерархии?", Юридическая наука и правоохранительная практика, 2014, №4 (30), էջեր 50-58, https://cyberleninka.ru/article/n/kak-opredelit-litso-zanimayuschee-vysshee-polozhenie-v-prestupnoy-ierarhii (մուտք 06.11.2024թ.):

D. A. Grigoriev, V. I. Morozov, "How to determine the person occupying the highest position in the criminal hierarchy?", Legal Science and Law Enforcement Practice, 2014, No. 4 (30), 50-58 pages, https://cyberleninka.ru/article/n/kak-opredelit-litso-zanimayuschee-vysshee-polozhenie-v-prestupnoy-ierarhii (access 06.11.2024).

18. С. Д. Белоцерковский "Новый федеральный закон об усилении борьбы с преступными сообществами: комментарий и проблемы применения", Уголовное право, ISSN: 2071-5870, 2010, № 2, էջեր 9-14, https://www.elibrary.ru/item.asp?id=14865099 (մուտք 06.11.2024թ.):

S. D. Belotserkovsky, "The new federal law on strengthening the fight against criminal communities: commentary and problems of application", Criminal Law, ISSN: 2071-5870, 2010, No. 2, 9-14 pages, https://www.elibrary.ru/item.asp?id=14865099 (access 06.11.2024).

19. Т. В. Стукалова "Занятие высшего положения в преступной иерархии: проблемы квалификации и доказывания", DOI: https://doi.org/10.23670/IRJ.2021.103.1.105, Международный научно-исследовательский журнал, №1-4 (103), 2021, էջեր 93-97, https://cyberleninka.ru/article/n/zanyatie-vysshego-polozheniya-v-prestupnoy-ierarhii-problemy-kvalifikatsii-i-dokazyvaniya (մուտք 06.11.2024թ.):

T. V. Stukalova "Occupation of the highest position in the criminal hierarchy: problems of qualification and proof", DOI: https://doi.org/10.23670/IRJ.2021.103.1.105, International Research Journal, No. 1-4 (103), 2021, 93-97 pages, https://cyberleninka.ru/article/n/zanyatie-vysshego-polozheniya-v-prestupnoy-ierarhii-problemy-kvalifikatsii-i-dokazyvaniya (access 06.11.2024).

Arman Babakhanyan
Judge of the Court of First Instance of General Jurisdiction of Armavir Region,
Lecturer and Ph.D. Student at the Department of Criminal Law,
Faculty of Law, Yerevan State University

SOME KEY ISSUES IN THE CRIMINAL-LEGAL FIGHT AGAINST PERSONS HAVING A HIGH STATUS IN THE CRIMINAL HIERARCHY[28]

Abstract

This article is dedicated to the criminal-legal fight against persons having a high status in the criminal hierarchy.

The legislator, by providing article 322 of the Criminal Code of the Republic of Armenia, aims to provide criminal liability for the representatives of the upper echelon of the thieves' world also in cases when the crimes of leading or participating in the thieves' world are absent in their actions.

In this regard, it should be noted that some of the approaches adopted by the legislator, when formulating article 322 of the Criminal Code of the Republic of Armenia, are problematic, which is why this study is relevant. The purpose of this article is to present proposals aimed at increasing the effectiveness of the criminal-legal fight against the criminal subculture as a result of the systematic study and analysis of the legal regulation provided for in article 322 of the Criminal Code of the Republic of Armenia.

As a result of the research, the author suggested using the term "high status in the criminal hierarchy" instead of the term "highest status in the criminal hierarchy". The author also proposed to repeal part 3 of article 322 of the Criminal Code of the Republic of Armenia, and in case it is retained, to provide a presumption in it.

The author also found that it is necessary to edit the concept of a holder of a high status in the criminal hierarchy provided for by article 322, part 2 of the Criminal Code of the Republic of Armenia, presenting his own version of the discussed concept.

Keywords: criminal subculture; thieves' world; highest status in the criminal hierarchy; thief in law; manage the thieves' world; participate in the thieves' world.

[28] The article was presented on 12.02.2025 and was reviewed on 28.10.2025.

Арман Бабаханян
Судья суда первой инстанции общей юрисдикции Армавирской области, Преподаватель и аспирант кафедры уголовного права юридического факультета Ереванского государственного университета

НЕКОТОРЫЕ КЛЮЧЕВЫЕ ВОПРОСЫ УГОЛОВНО-ПРАВОВОЙ БОРЬБЫ ПРОТИВ ЛИЦ, ИМЕЮЩИХ ВЫСОКИЙ СТАТУС В КРИМИНАЛЬНОЙ ИЕРАРХИИ[29]

Абстракт

Данная статья посвящена уголовно-правовой борьбе с лицами, занимающими высокий статус в криминальной иерархии.

Законодатель, предусмотрев статью 322 Уголовного кодекса Республики Армения, стремился предусмотреть уголовную ответственность для представителей верхнего эшелона воровского мира и в тех случаях, когда в их действиях отсутствует состав преступлений по руководству или участию в воровском мире.

В этой связи следует отметить, что некоторые подходы, использованные законодателем при формулировании статьи 322 Уголовного кодекса Республики Армения, являются проблемными, чем и обусловлена актуальность данного исследования. Целью данной статьи является представление предложений, направленных на повышение эффективности уголовно-правовой борьбы с криминальной субкультурой в результате системного изучения и анализа правового регулирования, предусмотренного ст. 322 УК РА.

В результате проведенного исследования автор предложил использовать термин «высокий статус в криминальной иерархии» вместо термина «высший статус в криминальной иерархии». Автор также предложил отменить часть 3 статьи 322 Уголовного кодекса Республики Армения, а в случае ее сохранения предусмотреть в ней презумпцию.

Автор также счел необходимым отредактировать понятие обладателя высокого статуса в криминальной иерархии, предусмотренное частью 2 статьи 322 УК РА, представив собственную версию обсуждаемого понятия.

Ключевые слова: криминальная субкультура; воровской мир; высший статус в криминальной иерархии; вор в законе; управлять воровским миром; участвовать в воровском мире.

[29] Статья была представлена 12.02.2025 и прошла рецензирование 28.10.2025.